# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

«7 » սեպտեմբերի 2023 թվականի N: 347 - Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 27-Ի N 80-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով.

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2023 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու Վ.Աբաջյանի անվան Ընտանեկան բժշկության կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2023 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը, հաստիքացուցակը հաստատելու և տնօրենի վարձատրության չափը սահմանելու մասին» N 80-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված Ընկերության 2023 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2) Որոշման 2-րդ կետում՝ «420000 (չորս հարյուր քսան հազար)» թիվը և բառերը փոխարինել «550000 (հինգ հարյուր հիսուն հազար)» թվով և բառերով:

Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2023 թվականի 7 ապր.-ի N 347 -Ա որոշման
«Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2023 թվականի 27 մարտի-ի N 80 -Ա որոշման

# ՆԱԽԱՀԱՇԻՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ Վ.ԱԲԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ

**1.Եկամուտներ**

1) Պետական բյուջե՝ 157678.5 հազար ՀՀ դրամ,
2) Վճարովի ծառայություններ՝ 11000.0 հազար ՀՀ դրամ,
3) Այլ եկամուտներ՝ 8000.0 հազար ՀՀ դրամ,

**Ընդամենը՝** **176678.5** հազար ՀՀ դրամ:

**2. Ծախսեր՝**

/հազար ՀՀ դրամ/

| N | Հոդվածներ | % | I եռամսյակ | I կիսամյակ | Ինն ամիս | Տարի |
|---|---|---|---|---|---|---|
| 1) | Աշխատավարձ | 84.62 | 38500 | 73052 | 116000 | 149500 |
| 2) | Դեղորայք | 8.21 | 4000 | 9936 | 12000 | 14500 |
| 3) | Գազ | 1.13 | 1200 | 1500 | 1500 | 2000 |
| 4) | Էլեկտրաէներգիա | 1.13 | 950 | 1446 | 1600 | 2000 |
| 5) | Կապի ծառայություն | 0.20 | 120 | 200 | 300 | 350 |
| 6) | Կոմունալ | 0.34 | 200 | 300 | 450 | 600 |
| 7) | Գրասենյակային ծախսեր | 0.45 | 200 | 350 | 500 | 800 |
| 8) | Տնտեսական ծախսեր | 0.54 | 700 | 800 | 850 | 950 |
| 9) | Վառելիք | 0.32 | 136.8 | 325 | 393.4 | 565 |
| 10) | Միջբուժհիմնարկային ծախսեր | 0.40 | 250 | 458.6 | 600 | 700 |
| 11) | Տրանսպորտային միջոցների վերանորոգման ծախսեր | 0.36 | 200 | 267 | 500 | 630 |
| 12) | Սարքավորումների ընթացիկ վերանորոգում | 0.06 | 0 | 0 | 50 | 100 |
| 13) | Հիմնական միջոցների մաշվածություն | 0.14 | 0 | 0 | 0 | 250 |
| 14) | Հիմնական միջոցների ձեռքբերում | 0.57 | 600 | 1010 | 1010 | 1010 |
| 15) | Հարկեր-տուրքեր | 0.45 | 150 | 300 | 500 | 800 |
| 16) | Այլ ծախսեր | 0.93 | 500 | 800 | 1200 | 1650 |
| Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը | | 99.8 | 47706.8 | 90744.6 | 137453.4 | 176405.0 |

**3. Շահույթ՝ 273.5 հազար ՀՀ դրամ:»:**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝** **Մ.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Իսկականի հետ ճիշտ է